

## ՀԱՍՄԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Երևանի «Գլածոր» համալսարանի որակի ապահովման կենտրոնի ղեկավար,  
իրավաբանական գիտությունների թեկնածու



## ՄԻԶԱՋԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԵՐԻ ԴԵՐԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԻԶԱՋԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Հոդվածում լուսաբանվում և քննարկվում է միջազգային կազմակերպությունների շրջանակներում գործող մարդու կրթության իրավունքի երաշխավորման և պաշտպանության ժամանակակից միջազգային իրավական կառուցակարգերը, ինչպես նաև դրանց արդյունավետությունը: Մասնավորապես, հեղինակը քննարկել է կրթության իրավունքի վերաբերյալ ՄԱԿ-ի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի, ԵԽ-ի, ԱՄԿ-ի կողմից ընդունված միջազգային պայմանագրերի դերն ու կարևորությունը մարդու այս իրավունքի ճանաչման և երաշխավորման գործում, ինչպես նաև այդ պայմանագրերով պետությունների ստանձնած պարտավորությունների կատարման ապահովման միջոցներն ու դրանց արդյունավետությունը: Առանձնապես քննարկել է միջազգային կառույցների շրջանակներում գործող քվաղիդատական և դատական մարմինների գործունեությունը՝ կրթության իրավունքի պաշտպանության ժամանակակից միջազգային իրավական կառուցակարգերի լուսաբանման և այլ նպատակներով: Ի լրումն հոդվածում հեղինակն առաջ է քաշում քննարկվող իրավունքի միջազգային իրավական պաշտպանության մեխանիզմների կատարելագործման նոր ուղիներ:

**Հիմնարար քառեր- կրթության իրավունք, ՄԱԿ, ՅՈՒՆԵՍԿՕ, Աշխատանքի միջազգային կազմակերպություն, Եվրոպայի խորհրդություն, միջազգային իրավական կարգավորում և պաշտպանություն, քվաղիդատական և դատական մարմիններ:**

Միջազգային կազմակերպությունները, inter alia, մեծ դեր ունեն ինչպես մարդու իրավունքների ճանաչման ու երաշխավորման, այնպես էլ դրանց պաշտպանության գործում: Կրթության իրավունքը, հանդիսանալով մարդու բնական, անկատելի իրավունք, նույնպես միջազգային իրավական կարգավորման ու պաշտպանության է արժանացել մի շարք միջազգային կազմակերպությունների կողմից: Կրթության բնագավառում առավել կարևոր և ազդեցիկ է Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ), Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի հարցերով կազմակերպության (ՅՈՒՆԵՍԿՕ), Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ), Եվրոպայի խորհրդի (ԵԽ) դերը:

**ՄԱԿ-ի** առաջին համընդգրկում միջազգային կազմակերպությունն է, որի հովանու ներքո իրավական կարգավորման և պաշտպանության են արժանանում թե՛ քաղաքական և քաղաքացիական, թե՛ սոցիալ-տնտեսական ու մշակութային իրավունքները:

ՄԱԿ-ի նպատակներից մեկը տնտեսական,

սոցիալական, մշակութային և մարդասիրական բնույթի միջազգային հիմնախնդիրների լուծման հարցում համագործակցությունն է, ինչը հնարավորություն է տալիս ՄԱԿ-ին ստեղծել մի շարք միջազգային իրավական փաստաթղթեր, իրականացնել մշտադիտարկում դրանց կատարման նկատմամբ, ինչպես նաև ձևավորել քվաղիդատական մարմիններ:

ՄԱԿ-ի շրջանակներում կրթության իրավունքի միջազգային իրավական կարգավորումն ու պաշտպանությունն առաջին հերթին իրականացվում է 1966թ. Տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի համատեքստում, ինչը հանդիսանում է այս իրավունքների պաշտպանության հիմնական գործիք: Չննարկվող Դաշնագրի միջազգային մշտադիտարկումը լիովին հիմնված է գեկույցների ընթացակարգի վրա: Ի տարբերություն 1966թ. Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագրի, քննարկվող Դաշնագիրը չի նախատեսում հատուկ վերահսկիչ մարմնի առկայություն: Այս գործառույթը սկզբում դրված

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ՍԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի վրա, սակայն Դաշնագրի ուժի մեջ մտնելուց հետո պարզվեց, որ Տնտեսական և սոցիալական խորհրդն ինքնուրույն չի կարող իրականացնել իր վրա դրված գործառույթները: Այն ստեղծեց լրացուցիչ մարմին (Աշխատանքային խումբ), որն աջակցում էր Տնտեսական և սոցիալական խորհրդին Դաշնագրի պարտավորությունների կատարման նկատմամբ մշտադիտարկում անցկացնելու գործում և խորհրդատվություն էր իրականացնում պետությունների ներկայացրած գեկույցների առնչությամբ<sup>2</sup>: Այս մարմինի աշխատանքն արժանացավ խիստ քննադատության հիմնականում այն պատճառով, որ այն կրում էր քաղաքական քնույթ (կազմված էր 15 կառավարությունների ներկայացուցիչներից) և նախատեսում էր անդամության կարծ ժամանակահատված (1 տարի)<sup>3</sup>: Սա ստիպեց Տնտեսական ու սոցիալական խորհրդին կատարելու որոշ քարեփոխումներ՝ 1982թ. Խորհուրդը որոշեց, որ մարմինը պետք է քաղկացած լինի մասնագիտական հմտություններ ունեցող անձանցից և ընտրվի երեք տարի ժամանակով: Սակայն, չնայած այս փոփոխություններին, մարմինի աշխատանքը շարունակում էր մնալ անբավարար, ընդ որում, մի շարք հեղինակություն վայելող իրավաբանների կողմից այն դրակվեց որպես «ամբողջովին անարդյունավետ»:<sup>5</sup>

Վերջապես 1985թ. Տնտեսական ու սոցիալական խորհուրդը վերանայեց մարմնի աշխատանքը և որոշեց փոխարինել այն Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեով<sup>6</sup>: Փաստորեն, ներկայում այս Կոմիտեն է վերահսկողություն իրականացնում տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների իրականացման նկատմամբ, որոնց թվում է նաև կրթության իրավունքը<sup>7</sup>:

Պաշտոնապես Կոմիտեի իրավասությունը բխում է Տնտեսական ու սոցիալական խորհրդից, սակայն տարիների ընթացքում այն իր դիրքերն ամրապնդել է նաև որպես Տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի վերահսկիչ մարմին<sup>8</sup>: Զննարկվող Դաշնագրով նախատեսված գեկույցների ներկայացման ընթացակարգը հիմնված է նաև այս պետության և Տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքների կոմիտեի միջև երկխոսության վրա, որն իրականացվում է Կոմիտեին ներկայացվող գրավոր գեկույցների և բաց լսումների

միջոցով: Բանավոր լսումներից հետո Կոմիտեն ընդունում է իր եգրաֆակիչ դիտարկումները տվյալ պետության գեկույցի առնչությամբ:

Ինչ վերաբերում է կրթության իրավունքին, ապա պետք է նշել, որ Կոմիտեն մշտադիտարկում է իրականացնում այս իրավունքի կատարման նկատմամբ միայն Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 13-րդ և 14-րդ հոդվածների շրջանակներում: Այն բոլոր պետությունները, որոնք միացել են սույն Դաշնագրին, պարտավոր են գրավոր գեկույց ներկայացնել Կոմիտեին՝ ստանձնած պարտավորությունների կատարման վերաբերյալ: Հետևաբար, անդամ պետությունների կողմից ներկայացրած գեկույցները, *inter alia*, տվյալներ են պարունակում կրթության իրավունքի իրականացման, պետությունների կողմից իրենց պարտավորությունների կատարման, առկա հիմնախնդիրների և այլնի մասին, ինչի շուրջ Կոմիտեն ընդունում է եգրաֆակիչ դիտարկումներ: Ի լրում՝ կոմիտեն ընդունում է իրավաբանական ուժ ունեցող ընդհանուր մեկնաբանություններ: Հարկ է հիշատակել Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի իմպլեմենտացիայի վերաբերյալ արված N 13 ընդհանուր մեկնաբանությունը, որն ուղղակիորեն առնչվում է կրթության իրավունքին: Մասնավորապես, վերջինիս կարևորությունն այն է, որ բացահայտում է Դաշնագրի 13-րդ հոդվածի նորմատիվային բովանդակությունը, պետությունների պարտավորությունների շրջանակը և վեր է հանում կրթության իրավունքի խախտման հատկանիշները: Կրթության իրավունքին առնչվող հաջորդ իրավական ակտը N 11 ընդհանուր մեկնաբանությունն է, որը վերաբերում է Դաշնագրի իմպլեմենտացման ժամանակ ծագող հիմնական խնդիրներին: Ուշադրության է արժանացել Դաշնագրի 14-րդ հոդվածը, մշակվել են գործողության ծրագրեր հատկանիշ տարրական կրթության իրականացման վերաբերյալ, պարզաբանվել են մի շարք հասկացություններ<sup>10</sup>: Կոմիտեն օժտված է նաև պաշտոնական հայտարարություններ կատարելու իրավասությամբ: Այս առումով պետք է նշել Սիջազգային խորհրդակցական կոնֆերանսի ժամանակ դպրոցական կրթության մասին Կոմիտեի արած հայտարարությունը, որը վերաբերում է մտքի, խոյնի ազատությանը, հանդուժմողականությանը, խտրականության արգելմանը<sup>11</sup>:

Ներկայումս Կոմիտեն լուրջ և դրական քայլ է կատարել Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների լիարժեք միջազգային իրավական պաշտպանության ուղղությամբ: Խոսքը վերաբերում է Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների վերաբերյալ միջազգային դաշնագրի Կամընտիր արձանագրությանը, որն ընդունվել է 2008թ. Գլխավոր ասամբլեայի կողմից: Բանն այն է, որ Կամընտիր արձանագրությունը հնարավորություն է ընձեռում անձին կամ անձանց խմբին՝ դիմելու Կոմիտեին՝ սոցիալ-տնտեսական կամ մշակութային այն խախտված իրավունքները վերականգնելու համար, որոնք ամրագրված են Դաշնագրով<sup>12</sup>:

Փաստորեն, ի թիվս այլ սոցիալ-տնտեսական, մշակութային իրավունքների, Կամընտիր արձանագրությունը հնարավորություն է տալիս կրթության իրավունքի խախտման դեպքում դիմել Կոմիտեին: Նշենք, որ այս դեպքում Կոմիտեն, համաձայն Կամընտիր արձանագրության, չի հանդիսանում վերին կամ չորրորդ ատյան. Վերջինիս նպատակը վերահսկողություն իրականացնելն է պետության ստանձնած պարտավորությունների կատարման նկատմամբ: Կարծում ենք, որ ըստ Էության Կոմիտեն ձեռք է բերում քվազիդատական մարմնի կարգավիճակ: Սա ապացուցում է նաև այն հանգամանքը, որ Կոմիտեն իրավասու է մինչև վերջնական որոշում կայացնելը դիմելու ենթադրյալ իրավախախտ պետությանը՝ իրավունքի պաշտպանության ժամանակավոր միջոցներ կիրառելու նպատակով<sup>13</sup>:

Ինչեւ, Կոմիտեին նման իրավասությամբ օժտելը սպասված և կարևոր քայլ էր սոցիալ-տնտեսական, մշակութային իրավունքների պաշտպանության ուղղությամբ: Կարծում ենք, որ Կոմիտեի գործունեությունը խթան կհանդիսանա, *inter alia*, կրթության իրավունքի միջազգային իրավական պաշտպանության առկա կառուցակարգերը զարգացնելու, պետությունների կողմից կրթության իրավունքի իրացման արդյունավետությունը բարձրացնելու և այլ նպատակների համար: Քննության առարկա է այն հարցը, թե արդյո՞ք Կոմիտեն պետք է ունենա այն պետությանը պատասխանատվության ենթարկելու իրավասություն, որը չի ապահովել միջազգային փաստաթրերով երաշխավորված կրթության իրավունքի համապատասխան իրականացում և իր պարտավորությունների բարեխղճ կատարում: Բանն այն է, որ կրթության իրա-

վունքի իրականացումը պետությունների համար առաջացնում է ֆինանսական մեծ ներդրումների պահանջ, ինչը ոչ բոլոր պետություններն են ի վիճակի ապահովել. սովորաբար պետություններն իրականացնում են այս իրավունքը իրենց ֆինանսա-տնտեսական հնարավորությունների սահմաններում: Այս առումով վիճելի է, թե Կոմիտեի՝ խախտված իրավունքը վերականգնելու նպատակով ենթադրաբար կիրավովելիք պատասխանատվության ձևերն ու միջոցները որքանով կնապատեն կրթության իրավունքի լիարժեք իրականացմանը: Մյուս կողմից, կարծում ենք, կրթության իրավունքի միջազգային պաշտպանության նման կառուցակարգերը լիարժեք չեն ապահովի այս իրավունքի իրականացումն առանց իրավախախտ պետությանը համապատասխան պատասխանատվության ենթարկելու միջոցների և ձևերի նախատեսման:

Ժամանակակից միջազգային իրավունքում կրթության իրավունքի կարգավորման և պաշտպանության հարցերով գրադպու միակ խոշոր միջազգային կառույցը ՅՈՒՆԵՍԿՕ-ն է: Կրթության վերաբերյալ ՅՈՒՆԵՍԿՕ-ն ընդունել է մի շարք միջազգային իրավական փաստաթրեր՝ հիմնականում նպատակ ունենալով ամբողջովին բացահայտել Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 13-րդ հոդվածի բովանդակությունը: Լայն տարածում է գտել այն միտքը, որ շնորհիվ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողին փակացման ջանքերի՝ այսօր կրթության իրավունքը հստակորեն սահմանված և արդյունավետ պաշտպանված սոցիալ-տնտեսական, մշակութային իրավունքներից մեկն է<sup>14</sup>: Այդ փաստաթրերից են, մասնավորապես, Կրթության բնագավառում խտրականության դեմ 1960թ. կոնվենցիան, Տեխնիկական և մասնագիտական կրթության մասին 1989թ. կոնվենցիան, Ֆիզիկական կրթության և սպորտի մասին միջազգային 1978թ. կանոնադրությունը և այլն:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի շրջանակներում միջազգային կրթական չափորոշիչների մշտադիտարկումն իրականացնում է Կոնվենցիաների և առաջարկությունների կոմիտեն<sup>15</sup>: Այն քննության է առնում նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի պաշտպանության ներքո գտնվող մարդու իրավունքների խախտման հետ կապված գործերն ու հարցերը: Այս վերջին գործառությը հնարավորություն է տալիս միջազգային մակարդակով անհատական դիմումներ ներկայացնել կրթության իրավունքի խախտման դեպքերի վերա-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

բերյալ: Բացի նշվածից, ՅՈՒՆԵՍԿՕ-ին անդամակցող պետությունները վերջինիս շրջանակներում ընդունվող միջազգային պայմանագրերին միանալու դեպքում պարտավոր են հետազայում զեկուցել դրանց կատարման ընթացքի մասին<sup>16</sup>:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի շրջանակներում գործող մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմները, անկանությունը, մեծապես նպաստում են ժամանակակից միջազգային իրավունքում կրթության իրավունքի վերաբերյալ միջազգային պայմանագրերով պետությունների ստանձնած պարտավորությունների բարեխիղճ կատարմանը: Այդուհանդերձ, վերը նշված մարմինների գործունեության արդյունավետությունը միջազգային իրավունքի գիտության մեջ բազմաթիվ քննարկումների տեղիք է տալիս, որոնք հանգում են նրան, որ այդ մարմիններն ունեն կատարելագործման անհրաժեշտություն՝<sup>17</sup>:

**ԱՄԿ-Ը** ևս նշանակալի դեր ունի կրթության կարգավորման և կրթության իրավունքի ապահովման գործում: Այս հանգամանքը նախ և առաջ արտահայտված է ԱՄԿ-ի կանոնադրության նախարանում, որը սահմանում է վերջինիս գործունեության հիմնական ուղղություններն ու նպատակները՝ դրանց բային դասելով նաև մասնագիտական ու տեխնիկական կրթության ոլորտում համապատասխան միջոցների ձեռնարկումը: Առաջին հերթին ԱՄԿ-ի գործունեությունն ուղղակի կապված է կրթության կարգավորման և կրթության իրավունքի իրականացման հետ այն առումով, որ վերջինս համապատասխան իրավական փաստաթրերի միջոցով սահմանում է աշխատանքի նվազագույն տարիքը՝ պարտավորեցնելով անդամ պետություններին միջոցներ ձեռնարկել մինչ այդ տարիքը երեխաներին աշխատանքի մեջ չներգրավելու և կրթության իրավունքն իրացնելու համար: Այսպես, 1919թ. ընդունված Աշխատանքի նվազագույն տարիքի վերաբերյալ կոնվենցիան ամրագրում է, որ մինչև 14 տարեկան երեխաներին արգելվում է ներգրավել ցանկացած աշխատանքի մեջ՝ Սա հիմնական կանոն է, որից բացառություններ նախատեսված են, օրինակ՝ Աշխատանքի նվազագույն տարիքի վերաբերյալ 1932թ. կոնվենցիայով, Աշխատանքի նվազագույն տարիքի վերաբերյալ 1936թ. վերանայված կոնվենցիայով (վերաբերում է ծովային աշխատանքներին), Աշխատանքի նվազագույն տարիքի վերաբերյալ 1937թ. վերանայված կոնվենցիայով (վերաբերում է ոչ արդյունաբերա-

կան աշխատանքներին): Վերջիններիս համաձայն՝ արգելվում է մինչև 15 տարեկան կամ 15 տարեկանից բարձր այն երեխաներին, որոնց դպրոց հաճախելը պետության ներպետական օրենսդրությամբ պարտադիր է, ներգրավել աշխատանքի մեջ: Փաստորեն, ԱՄԿ-ն, աշխատանքի իրավունքն իրացնելու որոշակի տարիք սահմանելով, միաժամանակ ապահովում է նախնական կամ միջնակարգ կրթության իրավունքի իրացումը: Այս նպատակին են ծառայում նաև Հարկադիր աշխատանքի մասին 1930թ. և Հարկադիր աշխատանքն արգելելու մասին 1957թ. կոնվենցիաները, որոնք արգելում են հարկադիր կամ պարտադիր աշխատանքը և դրանով նպաստում երեխաների, հատկապես աղջիկների կրթություն ստանալուն:

Կազմակերպության վերջին տվյալներով 2008թ. դրույթյամբ 306 000 000 երեխա՝ 5-17 տարիքային սահմանում, աշխատում է՝ ԱՄԿ-ի հիմնական նպատակն է նվազագույնի հասցնել աշխատող երեխաների քանակը, ներգրավել նրանց կրթական հարաբերություններում, զարգացնել տեխնիկական և մասնագիտական կրթությունը, որպեսզի այս երեխաները տարրական կրթության հիման վրա ձեռք բերեն առնվազն տեխնիկական կամ մասնագիտական գիտելիքներ՝ աշխատելու և իրենց պահանջմունքները բավարարելու համար: Հատկանշական է, որ ԱՄԿ-ի ձեռնարկած միջոցառումների արդյունքում նվազում է նաև աշխարհում տգիտության մակարդակը: ՅՈՒՆԵՍԿՕ-ն և ԱՄԿ-ն սերտորեն համագործակցում են և համատեղ ծրագրեր իրականացնելու միջոցով նպաստում են ինչպես կրթության, այնպես էլ սոցիալ-տնտեսական այլ իրավունքների իրականացմանը:

**ԵԽ-Ը** միջազգային այնպիսի կառույց է, որն ուղղակի ազդեցություն է ունենում կրթության իրավունքի բովանդակության բացահայտման և վերջինիս կատարումն ապահովելու վրա: Այս կազմակերպության շրջանակներում գործում է 1950թ. ընդունված Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան, ինչը հանդիսանում է վերջինիս գործունեության հիմնական ձևաչափը: Ի սկզբանե կոնվենցիան ներառում էր քաղաքացիական և քաղաքական իրավունքներ ու ազատություններ, և, հետևաբար, մասնակից պետությունները պարտավորություն էին կրում ապահովելու միայն իրավունքների այս խմբի կատարումը: Այնուհետև կոնվենցիային կից ընդունվող արձանագրությունները

սկսեցին ընդգրկել մի շաբթ սոցիալ-տնտեսական ու մշակութային իրավունքներ, որոնց թվում է նաև կրթության իրավունքը: Այն նախատեսված է քննարկվող կոնվենցիայի թիվ 1 արձանագրությամբ: Ինչպես կոնվենցիայով և կից արձանագրություններով ամրագրված իրավունքների, այնպես էլ կրթության իրավունքի մեկնաբանման և պաշտպանության հիմնական մարմինը Եվրոպայի խորհրդի շրջանակներում գործող Մարդու իրավունքների Եվրոպական դատարանն է, որը, սակայն, չի հանդիսանում վերին կամ չորրորդ ատյանի դատարան, այլ կոչված է միայն ապահովել պետությունների՝ կոնվենցիայով և կից արձանագրություններով ստանձնած պարտավորությունների կատարումը:

Դատարանի առանձնահատկությունն այն է, որ վերջինիս դիմելու և խախտված իրավունքը վերականգնելու իրավունք ունեն ինչպես պետությունները, այնպես էլ յուրաքանչյուր ոք, ում նկատմամբ կոնվենցիայի մասնակից պետությունը խախտել է դրանով կամ կից արձանագրություններով ամրագրված որևէ իրավունք: Այս հանգանակը հնարավորություն է տալիս անհատական գանգատների միջոցով բացահայտել կրթության իրավունքի բովանդակությունը, վերականգնել խախտված իրավունքը և կանխել վերջինիս հետագա հնարավոր խախտումները<sup>20</sup>: Հարկ է նկատել, որ Եվրոպական դատարանը միակ կառույցն է, որն իրավասու է արդարադատություն իրականացնել և պատասխանատվության ենթարկել իրավախախտ պետությանը վճարի փոխհատուցման մեխանիզմի միջոցով: Մինչդեռ քննարկված մյուս միջազգային մարմններն ունեն կամ քվաղիդատական, կամ վերահսկողական բնույթ: Սա վկայում է այն մասին, որ ԵԽ շրջանակներում կրթության իրավունքը ենթակա է լիարժեք պաշտպանության: Սակայն խնդիրն այն է, որ Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 2-րդ հոդվածը կրթության իրավունքի քննագավառում պետությունների համար նախատեսում է այս իրավունքի իրականացման սահմանափակ պարտավորություններ, քան վերը քննարկված միջազգային իրավական այլ փաստարդեր: Կրթության իրավունքը ԵԽ շրջանակներում պաշտպանվում է այնքանով, որքանով Դատարանն իր որոշումների միջոցով բացահայտել է նշված նորմի բովանդակությունը և պետությունների պարտավորությունների շրջանակը: Ստացվում է, որ մի դեպքում առկա են կրթության իրավունքի միջազգային պաշտպանության այնպիսի կառուցակարգեր,

որոնք քննության են առնում միջազգային համընդհանուր փաստաբղերով երաշխավորված կրթության իրավունքի ցանկացած իրավախախտում, սակայն այդ մարմիններում գործի քննությունը չի հանգեցնում իրավախախտման համար պետության պատասխանատվության, մյուս դեպքում՝ հակառակը. կրթության իրավունքի ոչ բոլոր խախտումների դեպքում կարելի է դիմել Եվրոպական դատարան, չնայած այստեղ նախատեսվում է պատճառված վճարի փոխհատուցում՝ որպես իրավախախտ պետությանը պատասխանատվության ենթարկելու միջոց:

Ի լրումն նշվածի՝ մարդու իրավունքների հանձնակատարը մշտադիտարկում է անցկացնում ԵԽ յուրաքանչյուր անդամ պետությունում՝ պարզելու մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների, այդ թվում նաև կրթության իրավունքի իրականացման փաստացի վիճակը, որանց իրականացմանը խոչընդոտող հանգանակները, առկա հիմնախնդիրները, ինչպես նաև հանդես է գալիք եզրակացություններով և առաջարկություններով: Անցկացված մշտադիտարկման արդյունքում մարդու իրավունքների հանձնակատարը կազմում է գեկույց, որն ամփոփ տվյալներ է պյարունակում վերը նշված հարցերի վերաբերյալ<sup>21</sup>: Կրթության իրավունքի հետ կապված՝ Եվրոպայի խորհուրդն իրականացնում է նաև այլ գործողություններ, իրականացնում է տարբեր ծրագրեր, իրապարակում է համապատասխան ժղովագումարները<sup>22</sup>:

Ամփոփելով՝ կարող ենք փաստել, որ կրթության իրավունքի միջազգային իրավական պաշտպանության առկա կառուցակարգերը չեն ապահովում այս իրավունքի արդյունավետ և լիարժեք պաշտպանություն: Ժամանակակից միջազգային իրավունքում կրթության իրավունքի իրականացման նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները հիմնականում կամ քվաղիդատական կամ վերահսկողական բնույթ ունեն և օժտված չեն լայն իրավասությամբ, մասնավորապես՝ կրթության իրավունքի խախտման համար պետություններին պատասխանատվության ենթարկելու իրավունքով: Միևնույն ժամանակ, ձևավորված վերահսկողական մարմինների (կոմիտեների) գործունեությունը ոչ բոլոր դեպքերում է իրապարակային և բարիանցիկ: Կրթության իրավունքի միջազգային պաշտպանության առումով առանձնահատուկ դեր ունի Մարդու իրավունքների Եվրոպական դատա-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

րանը, որն իրավասու է կրթության խախտված իրավունքի վերականգնման նպատակով նախատեսել վճասի փոխհատուցում՝ որպես պետությանը պատասխանատվության ենթարկելու միջոց։ Մյուս կողմից, Եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրությամբ ամրագրված կրթության իրավունքի մեկնարանությունը պետությունների համար չի առաջացնում պարտավորությունների լայն շրջանակ, և, փաստորեն, կրթության իրավունքի ցանկացած խախտում չէ, որ կարող է քննության առարկա դառնալ Եվրոպական դատարանում։

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ կարծում ենք, որ անհրաժեշտ է բոլոր միջոցներով ուժեղացնել կրթության իրավունքի միջազգային իրավական պաշտպանությունը՝ հաշվի առնելով նաև այն, որ կրթությունը ժամանակակից աշխարհում ընկալվում է որպես հասարակությունների և պետությունների զարգացման առանցքային գործոն և հիմնարար արժեք։ Մասնավորապես անհրաժեշտ է ընդ-

լայնել ՍԱԿ-ի համակարգում գործող Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի լիազորությունները՝ կապված կրթության իրավունքի պաշտպանության հետ, հատկապես վերանայել մոտեցումները իրավախախտ պետությանը պատասխանատվության ենթարկելու առումով։

Կարծում ենք, որ կրթության իրավունքի միջազգային իրավական պաշտպանության ուժեղացումը և առկա մեխանիզմների կատարելագործումը կհանգեցնի պետությունների կողմից այս բնագավառում ստանձնած միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարմանը, հատկապես պետությունների ներպետական օրենսդրություններում կրթության իրավունքի միջազգային երաշխիքների բարեխիղճ իմացնենալու և դրանց փաստացի իրականացմանը։

<sup>1</sup> Տե՛ս ՍԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 16-21 հոդվածներ։

<sup>2</sup> Տե՛ս ՍԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի 1988/LX/ բանաձեռ, կետ 9, 11 մայիսի, 1976։

<sup>3</sup> Տե՛ս Sepulveda M.M. “The Nature of the Obligations under the International Covenant on Economic, Social and Cultural Rights”, Intersentia nv, 2003, էջ 30։

<sup>4</sup> Տե՛ս ՍԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի 1980/24 բանաձեռ, 2 մայիսի, 1980։

<sup>5</sup> Տե՛ս Sepulveda M.M. Օշվ. աշխ., էջ 31։

<sup>6</sup> Տե՛ս ՍԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի 1985/17 բանաձեռ, կետ /ա/, 28 մայիսի, 1985։

<sup>7</sup> Տե՛ս Կոմիտեի ձևավորման և գործունեության կարգը, գործառույթները և այլ հարցեր. տե՛ս ՍԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի 1985/17 բանաձեռ, կետ /ա/, 28 մայիսի, 1985։

<sup>8</sup> Տե՛ս Sepulveda M.M. Օշվ. աշխ., էջ 32։

<sup>9</sup> Տե՛ս ՍԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի E/C.12/1999/10 փաստաթուղթը, 8 դեկտեմբերի, 1999։

<sup>10</sup> Տե՛ս ՍԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի E/C.12/1999/4 փաստաթուղթը, 10 մայիսի, 1999։

<sup>11</sup> Տե՛ս ՍԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի E/C.12/2001/16 փաստաթուղթը, 13 նոյեմբերի, 2001։

<sup>12</sup> Տե՛ս ՍԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի A/RES/63/117 փաստաթուղթը, հոդված 2, 10 դեկտեմբերի, 2008։

<sup>13</sup> Տե՛ս ՍԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի A/RES/63/117 փաստաթուղթը, հոդված 5, 10 դեկտեմբերի, 2008։

<sup>14</sup> Տե՛ս Beiter K.D. The Protection of the Right to Education by International Law. Martinus Nijhoff Publishers, 2006., էջ 235։

<sup>15</sup> Տե՛ս ՅՈՒՆԵՍԿՕ-ի պաշտոնական կայք, [www.unesco.org](http://www.unesco.org):

<sup>16</sup> Տե՛ս ՅՈՒՆԵՍԿՕ-ի կանոնադրություն, հոդված 4։

<sup>17</sup> Տե՛ս Հ.Թ. Վարդանյան, Կրթության իրավունքը և ՅՈՒՆԵՍԿՕ-ն, «Օրինականություն», N71, 2012, էջ 49-53։

<sup>18</sup> Տե՛ս Աշխատանքի նվազագույն տարիքի վերաբերյալ 1919թ. կոնվենցիա, հոդված 2։

<sup>19</sup> Տե՛ս Diallo Y., Hagemann F., Etienne A., Gurbuzer Y., Mehran F. “Global Child Labour Developments: Measuring Trends from 2004 to 2008”. International Labour Office, International Programme on the Elimination of Child Labour, Geneva, ILO, 2010, էջ 7։

<sup>20</sup> Տե՛ս Բելզիական լեզվական գործը, Տիմիշևն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության (Timishev v. Russia, Judgment of 13 December, 2005), Քչելլունը, Մադանը և Փեղերսենն ընդդեմ Դամիայի, Դ.Հ.-ն և այլք ընդդեմ Չեխիայի Հանրապետության (D.H. and Others v Czech Republic, Judgment of 13 November 2007), Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի

(Cyprus v. Turkey, Judgment of 10 May, 2001), Կոստելլո-Ռոբերտս վ Անդրեան և այլ գործերով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռները:

<sup>21</sup> Տե՛ս [http://www.coe.int/t/commissioner/Activities/visits\\_en.asp](http://www.coe.int/t/commissioner/Activities/visits_en.asp):

<sup>22</sup> Տե՛ս <http://hub.coe.int/>:

Ասմիկ Վարդանյան

Руководитель центра обеспечения качества

Ереванского Университета Гладзор,

кандидат юридических наук

## РЕЗЮМЕ

### *Роль международных организаций в международно-правовом регулировании и защиты права человека на образование*

В статье обсуждаются современные международно-правовые механизмы гарантiiи и защиты права человека на образование в рамках действующих международных организаций, а также эффективность этих механизмов. В частности автор обсуждает роль и значение международных договоров в связи с признанием и гарантированием права на образование, принятых в рамках ООН, ЮНЕСКО, Международной организации труда, Европейского Совета, а также обсуждаются международные правовые гарантiiи выполнения обязательств, вытекающих из вышеупомянутых договоров для государств-участников. В статье обсуждается деятельность квазисудебных и судебных органов, действующих в рамках международных организаций с намерением разъяснить современные международные правовые меры защиты права каждого на образование. В статье делаются конкретные предложения для улучшения международных правозащитных механизмов, касающихся, в особенности, права на образование.

**Ключевые слова:** право на образование, ООН, ЮНЕСКО, Международная организация труда, Европейский Совет, международно-правовое регулирование и защита, квазисудебные и судебные органы.

Hasmik Vardanyan

Head of Quality Assurance Center, Yerevan Gladzor Universit;

PhD in law

## SUMMARY

### *The Role of International Organizations in International Legal Regulation and Defense of the Human Right to Education*

This article is designed to interpret and discuss the contemporary International legal mechanisms, as well as their efficiency in guaranteeing and defending the human right to education within the framework of International organizations. Particularly, the author discusses the role and significance of International treaties on the right to education adopted by the United Nations, UNESCO, European Council, and International Labor Organization in recognizing and guaranteeing the human right to education, as well as the means of the fulfillment of obligations gained by state parties by above-mentioned International treaties. The activity of quasi-judicial and judicial bodies is also discussed having the aim to interpret the contemporary International legal mechanisms in defending the right to education within the framework of International organizations. Moreover, the author suggests new ways for the improvement of the International legal mechanisms on the defense of the right to education.

**Keywords:** Right to Education, United Nations, UNESCO, European Council, International Labor Organization, International legal regulation and defense, quasi-judicial and judicial bodies.